МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«08» մայիսի 2026թ.

«Մաքս Շին» ՍՊԸ-Ի տնօրեն
Վովա Պետրոսյանին
ՀՎՀՀ 04436799
Հասցե՝ ք. Երևան, Երևան-Էջմիածին խճ. 12, Պտղունք
Հեռ.՝ 077808088

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և «Մաքս Շին» ՍՊԸ-ի միջև 14.01.2026թ կնքված № ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/27-3 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Մաքս Շին» ՍՊԸ-ն պետք է մատակարարեր 25 հատ ձեռքի լապտեր, որը չի մատակարարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ Ընկերությունը 2026թ-ի մայիսի 8-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոգրյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Մաքս Շին» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո՝ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, Ընկերության «Արդշինբանկ» ՓԲԸ-ում բացված 2470139122970010 հաշվեհամարին փոխանցել 4860 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) և 1157 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն), որոնք հաշվարկված են մինչև 28.04.2026թ-ը ներառյալ:

Ինչպես նաև՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման գումարը կազմում է 25 000 ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը կազմում է 37500 ՀՀ դրամ, որոնք նույնպես անհրաժեշտ է վճարել Ընկերության «Արդշինբանկ» ՓԲԸ-ում բացված 2470139122970010 հաշվեհամարին:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը ներառվում է գնումների գործընթացներին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Այս կապակցությամբ տեղեկացնում եմ, որ Ձեր կողմից նշված գումարները մինչև 2026թ-ի մայիսի 18-ը ներառյալ վճարելու դեպքում «Մաքս Շին» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը վճարելուց հետո վճարված կտրոնի բնօրինակը, մինչև 2026թ-ի մայիսի 18-ը ներառյալ, Ձեր կողմից պետք է ներկայացվի «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերություն՝ ծրագրերի իրականացման ծառայության գնումների կազմակերպման բաժին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ պայմանագրի և որոկավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարները «Մաքս Շին» ՍՊԸ-Ի կողմից չվճարվելու դեպքում Ընկերությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ ծրագրերի իրականացման ծառայության գնումների կազմակերպման

բաժնի գլխավոր մասնագետ Սրբուհի Ներսիսյան, հեռ. 060380040